բնութիւնս մեր 'ի մանկութենէ ելանէ մինչև երիտասարդութիւն և երիտասարդութենէ իջանէ մինչև 'ի ծերութիւն, կայ և մնայ բնութիւնս մեր 'ի ներքոյ արեգական և 'ի վերայ երկրի, որպէս յերէկ և այսօր միևնոյն, մինչև սահմանեալ ժամանակն Արարչին Տեառն մերոյ Աստուծոյ։

Ո՛չ ոք մարդ ծնաւ 'ի վերայ երկրի, որում եկայց և մնայց 'ի վերայ հիման և հաստատութեան 'ի վերայ միոյ բանի և գործոյ և մտածութեան, բարիոք կարէ ընթերցողդ 'ի միտս առնուլ միմիայն ժամանակս կենաց իւրոյ 'ի վերայ երկրի՝ եթէ 'ի մանկութենէ իւրմէ առ 'ի տղայութիւնն և 'ի տղայութենէ առ 'ի երիտասարդութիւնն և 'ի երիտասարդութենէ առ 'ի ալևորութիւն մինչև 'ի ծերութիւն, որքան զանազան փոխարկութիւն գտեալ 'ի մէջ բնութեան իւրոյ, զի ո՛չ ոք կարէ ուրանալ զի այն որ այսօր լաւ է և ախորժ և շահաւէտ և խրախճանալի վասն մեր, վաղիւն գտանիցի վատ և անախորժ և ցաւակար և է տարակուսելի. այս ո՛չ լինի բարութիւն և չարութիւն իրին, որում ձկտէ միտս մեր, եթէ ո՛չ 'ի բերմանէ տարերաց բնութեան մերոյ, և 'ի Օրաւուր զանազան պատճառէ ծնանելոյ 'ի մէջ խառնուածոց բնութեան մերոյ՝ երբեմն 'ի կերակրոյ, երբեմն 'ի փարթամութենէ, երբեմն անոտի պատահմանց, և երբեմն 'ի տարբերութենէ աջողութեանց և ձախորդութեանց, որպէս